

կը հակի Տաթեւացին՝ ըսելով. «Քաջար՝
(է լօշ) պատառ պատառ կոտորեալ եւ
ի տապակի եփեալ իւղով» (Հրց. 357):
— Ս. Գրոց մէջ կը գտնենք դարձեալ
կարկանդակս (Երմ. Է, 18, ԽԳ, 19), «կը-
տապս¹ չամշեղէնս» (Ովս. Գ, 14), եւ
«շօրս բաղարջս զանգեալ իւղով», որոց
էութեան մասին չէ կարելի աւելի պայծառ
գաղափար կազմել: Վարդան կը մեկնէ
վերջինն՝ այսպէս. «շաւթ՝ յաշ անխմոր»
(Ղեւտ. Ա). եւ Տաթեւացին՝ թէ «շօթն (է)
րանձր լօշ եփեալ եւ ապա օծեալ իւղով»
(Հրց. 357): Բայց այս բացատրութիւնք
զմեզ չեն գոհացներ, այլ կը մնան մեկնու-
թեան փորձեր միայն:

Ոսկերերանի քաջ թարգմանիչն ուրիշ
գեղեցիկ եւ — տեղն է ըսելու — համեղ
պարգեւ մը կ'ընէ մեզ, բնագրէն անկախ՝
ուստի իւր կողմանէ իսկ յաւելլով քանի
մը խմորեղէն: Նախ կը թուէ ալիւրի եւ
րեք ազնիւ տեսակներ, «զնաշինն եւ զիւ-
րակն եւ զգերմակն», որոնք թուի թէ իրար-
մէ կը տարբերէին պատրաստութեան ու
նրբութեան կողմանէ, ըստ որում երեքն
ալ ցորենե կը հանուէին, կ'ըսէ ինքն իսկ:
Եւ իսկոյն կը յարէ աղոցմէ յօրինուած

1. Այս պրս. «Կիռչտապ, տեսակ ինչ կերակրոյ» (Գ.
Գպ.):